լիսում և այլուր[38]։ Ամենայն հավանականությամբ այս ճամբորդությունը նա կատարել է իր սեփական կալվածները անձամբ տեսնելու և ստուգելու համար։ Զաքարիա Ագուլեցու վկայությունից պարզվում է, որ բացի վերոհիշյալ հինգ խասս գյուղերից, նույն շրջանում կային նաև երկու այլ խասսեր, որոնց անունը նա չի հիշատակում[39]։

Խասս գյուղերի համայնքները, թեև վարչական հարցերում ենթարկվում էին ինչպես Նախիջևանի հաքիմին, այնպես էլ Երևանի բեկլարբեկիին, սակայն հարկային պարտավորություններով կապված լինելով անմիջապես խասսե-յե շարիֆեի սարքարության հետ, շատ հարցերում որոշ արտոնություններ էին վայելում, ավելի քիչ էին ենթարկվում տեղական պաշտոնյաների կամայականություններին և շատ հաճախ կարողանում էին իրենց բողոքները տեղ հասցնել[40]։

Թագավորական խասսին պատկանող գյուղերի և այլ ստացվածքների մանրամասն ցուցակները ըստ առանձին վիլայեթների պահվել են խասսե-յե շարիֆեի սարքարությունում՝ Սպահանում։ Բայց, ամենայն հավանականությամբ, առանձին նահանգների հարկային տեսչություններում ևս դրանք գրանցված են եղել, որպեսզի տարբերվեն դիվանի գյուղերից։

Խասս գյուղերի հարկերը, ինչպես ասվեց, գանձվում էին շահի կալվածների կառավարչության՝ սարքարության կողմից, առանձին «թահսիլդարների» և «մուբաշիրների» միջոցով։ Այդ հարկերը իրենց բնույթով և չափերով չէին տարբերվում դիվանի կամ մուլքային գյուղերի ռայաթներից գանձվող հարկերից. գյուղացիների սոցիալական վիճակը հիմնականում նույնն էր, ինչ որ մյուս ռայաթներինը, այն տարբերությամբ միայն, որ եթե դիվանի գյուղերի ռենտա-հարկը գանձվում էր դիվանի հարկահավաքների միջոցով, ապա այստեղ գյուղական համայնքը պատասխանատու էր անձամբ շահի կողմից նշանակված «խասսեդարներին»։ Շահ Սուլեյմանի 1689 թ. մի հրովարտակից տեղեկանում ենք, որ այն բանից հետո, երբ Կայրկլու մահալի խասսեդար և դարուղա (ոստիկանապետ) Քեյխոսրով Սագինաշվիլին սպանում է Է'թեմադ-ուդ-դովլեի վաճառականներին և փախչում Թուրքիա, այդ մահալի խասսեդարությունն ու Կրզբլբիլիսա և Օրթուլի գյուղերի դարուղայությունը տրվում է Օթար բեկ Բրաթելիին. ռայաթներին ու հողագործներին (رعايا و زارعين) կարգադրվում է բոլոր հարկերը վճարել նրան. Օթար բեկ Բրաթելին պետք է խասսեդարության և դարուղայության կարգով հանցավորներից հանցանքի չափով տուգանք վերցնի և այնպես վարվի ռայաթների հետ, որ բոլորն էլ խաղաղ ու հանգիստ լինեն[41]։ Սույն հրովարտակից պարզ երևում է, որ խասս գյուղերի կամ առանձին շրջանների գլխավոր վերակացուները, որոնք կոչվել են «խասսեդարներ», միաժամանակ վարել են նաև նույն վայրերի դարուղայության պաշտոնը։

Շահ Իսմայիլ Բ-ի օրոք, 1576 թ. օգոստոսի 22-ին գրված մի ընդարձակ կալվածագրից[42], ըստ որի նոր մահմեդական Մուրադ բեկ անունով մեկը Մեղրի գյուղը վաճառում է նույն գյուղի համայնքին, պարզվում է, որ խասսին

---

38 Տե՛ս تاريخ عالم آراى عباسى, հ. II, էջ 228։

39 Տե՛ս Զաքարիա Ագուլեցի, էջ 66 և 69։

40 Տե՛ս նույն տեղը, էջ 149—150։

41 Տե՛ս Մ. Խուրուա, նշվ. աշխ., էջ 26։

42 Տե՛ս Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1 գ., վավ. 1013։